**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ**
**ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N ՋԿ-ՀՄԱԱՇՁԲ-26/6-Ա**

ք. Երևան «03» հուն Վորի 2026թ.

«Ջրային կոմիտեն», ի դեմս գլխավոր քարտուղար Ա. Մանուկյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Մելիորացիա» ՓԲԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Ս. Միրոյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2026 թվականի մայիսի 21-ի N 721-Ն որոշումը կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Հայաստանի Հանրապետության Լոռու մարզում, հորդառատ անձրևներով պայմանավորված, հեղեղումների պատճառով առաջացած արտակարգ իրավիճակի հետևանքների վերացման նպատակով Տանձուտ, Դեբեդ, Փամբակ, Ձորագետ գետերի խնդրահարույց հատվածների մաքրման, ինչպես նաև 2026 թվականի հնարավոր վարարումների ռիսկերի կառավարման նպատակով իրականացնել հակահեղեղային անհետաձգելի աշխատանքների կատարումը:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 437,343,960 (չորս հարյուր երեսունյոթ միլիոն երեք հարյուր քառասուներեք հազար ինը հարյուր վաթսուն) ՀՀ դրամ, որից 72,890,660 (յոթանասուներկու միլիոն ութ հարյուր իննսուն հազար վեց հարյուր վաթսուն) ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4.3 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված գինն է (եթե ներառված են մեկից ավել չափաբաժիններ, ապա տվյալ չափաբաժնի գինն է).

ՆԳ-ն հրավերով հրապարակված շինարարական աշխատանքների նախահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ –ն ծավալաթերթ-նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը: Նկատի ունենալով ՀՀ կառավարության 21 մայիսի 2026 թվականի N 721 - Ն որոշման 2-րդ կետը՝ «Տանձուտ, Ձորագետ, Դեբեդ, Փամբակ գետերի խնդրահարույց հատվածների մաքրման աշխատանքների պայմանագրերի պայմանները տարածվելու են մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը 2026 թվականի փետրվարի 27-ից հետո փաստացի ծագած հարաբերությունների վրա»

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման

հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով.

1) Կատարողը պատասխանատվություն է կրում ենթակապալառուի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում ենթակապալառուի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով ենթակապալի պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

ա. ենթակապալառու թիվ 1 «ՕՁՈՒՆ-ՏՈՒՐ» ՍՊԸ-ն տնօրեն Ս. Դավթյան, հասցե՝ Լոռու մարզ գ.Օձուն, փողոց 14, տուն 14, ՀՎՀՀ 0661007, Հ/Հ 220323334361000, բանկը՝ «ԱԿԲԱ Բանկ» ԲԲԸ,

բ. ենթակապալառու թիվ 2 «ԿԱՐՍՇԻՆ» ՍՊԸ-ն տնօրեն Ա. Խառատյան, հասցե՝ ԼՄ ք. Վանաձոր, Թատերական փ 6/13, ՀՎՀՀ 06959039, Հ/Հ 1150009017247243

7.7 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով է:

7.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.10 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.11 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների

հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

7.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Պայմանագիրը կազմված է 18 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**

Ջրային կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
scws@scws.am
Հ/Հ 900011056836
ՀՎՀՀ 02555816
Կոմիտեի գլխավոր քարտուղար

---------------------------- Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ
(ստորագրություն)
Կ.Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

«Մելիորացիա» ՓԲԸ
ՀՀ Արարատի մարզ, ք. Էջմիածին,
գ.Հայանիստ, փ.22
«Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ 1570069947419400
ՀՎՀՀ 04214258
էլ. հասցե՝ melioracia00@mail.ru
Գլխավոր տնօրեն

---------------------------- Ս. ՄԻՐՈՅԱՆ
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 1
« 03» մարտի 2026թ. կնքված
ՁԿ-ՀՄԱԱՇՁԲ-26/6-Ա ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | կատարման | |
| | | | | | | | հասցեն | ժամկետը |
| 1 | 45241131/2 | գետերի հունանքների կարգավորման և ջրհեղեղների վերահսկման աշխատանքներ | դրամ | 437,343,960 | 437,343,960 | 1 | ՀՀ Լոռու մարզ | 2 ամիս |

**Տեխնիկական բնութագիր**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզում, հորդառատ անձրևներով պայմանավորված, հեղեղումների պատճառով առաջացած արտակարգ իրավիճակի հետևանքների վերացման նպատակով Տանձուտ, Ձորագետ, Դեբեդ, Փամբակ գետերի խնդրահարույց հատվածների մաքրման, ինչպես նաև 2026 թվականի հնարավոր վարարումների ռիսկերի կառավարման նպատակով հակահեղեղային անհետաձգելի միջոցառումների իրականացում

Ընդհանուր տվյալներ

ՀՀ փոխվարչապետի մոտ 16.02.2026թ. տեղի է ունեցել գետերի հուների մաքրման գործընթացի կազմակերպման և աշխատանքների իրականացման ուղղությամբ ձեռնարկված քայլերի վերաբերյալ քննարկում: Հաշվի առնելով հարցի հրատապությունը, ինչպես նաև աղետներից խուսափելու անհրաժեշտությունը, քննարկման արդյունքներով առաջարկվել է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները աշխատանքների շուտափույթ մեկնարկն ապահովելու համար, ինչպես նաև առաջարկվել է հրատապության հիմքով իրականացնել մեկ անձից գնում և մաքրման աշխատանքները պատվիրակել «Մելիորացիա» ՓԲԸ-ին (ՓՎ/38-2026 արձանագրություն):

Ջրային կոմիտեն դիմել է ՀՀ մարզպետների աշխատակազմեր՝ առաջարկելով ներկայացնել մարզերի տարածքներում գետերի հուների մաքրման անհրաժեշտություն ունեցող հատվածների ցանկերը՝ առանձնացնելով առավել հրատապ հատվածները: Ներկայացված առաջարկներից առավել հրատապ են ընտրվել ստորև ներկայացված աղյուսակում ներառված աշխատանքները:

ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի մասնագետների կողմից իրականացվել են Դեբեդ, Փամբակ, Տանձուտ և Ձորագետ գետերի հուների մաքրման առավել հրատապ անհրաժեշտություն ունեցող հատվածների ուսումնասիրություն: Ուսումնասիրությունից պարզվել է, որ աղետների անկանխատեսելի հետևանքները կանխարգելելու նպատակով հրատապ կարգով անհրաժեշտ է իրականացնել նշված գետերի հունի մաքրման աշխատանքները և դրանց համար ձեռք են բերվել նախագծանախահաշվային փաստաթղթեր (կցվում են):

Հրատապ մաքրման աշխատանքներ

1. **ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի Տանձուտ գետի հունի մաքրում** ՝ Տանձուտ գետի հունի 5220 մ երկարությամբ տարածքում աճած ծառերի և թփուտների հանում արմատախիլ անելով, գետի հունի մաքրում տիղմից և աղբից
2. **ՀՀ Լոռու մարզի Արևածագի ջրամբարի դելտայի մոտ Ձորագետ գետի հունի մաքրում՝** Ձորագետ գետի մաքրում հունի 460 մ երկարությամբ տարածքում աճած ծառերի և թփուտների հանում արմատախիլ անելով, գետի հունի մաքրում տիղմից և աղբից
3. **ՀՀ Լոռու մարզի Շնող բնակավայրի տարածքում Դեբեդ գետի հունի մաքրում՝** Դեբեդ գետի մաքրում հունի 1760 մ երկարությամբ տարածքում գետի հունի մաքրում տիղմից և աղբից
4. **ՀՀ Լոռու մարզի Եղեգնուտ բնակավայրի տարածքում Փամբակ գետի հունի մաքրում՝** Փամբակ գետի հունի 1760 մ երկարությամբ տարածքում գետի հունի մաքրում տիղմից և աղբից
5. **ՀՀ Լոռու մարզի Դեբեդ գետի երկայնքով երկաթուղու մի քանի հատվածների ափերի ամրացման աշխատանքներ՝** Դեբեդ գետի երկայնքով երկաթուղու Վանաձոր-Փամբակ երկաթուղային վազուրդի 2151 կմ, Հաղպատ կայարանին կից 2604 կմ, Սանահին կայարանում 2613 կմ և Ախթալա կայարանում 2594 կմ հատվածներում ափերի ամրացման աշխատանքներ

Վերը նշված աշխատանքներում անհրաժեշտ է ներառել նաև՝

- խիտ թփուտներից տարածքի մաքրման աշխատանքները.
- մոտեցնող ճանապարհների պրոֆիլավորման, կառուցման, հարթեցման աշխատանքները,
- կտրած և արմատահանված թփուտների հավաքման, տեղափոխման աշխատանքները:

1. Առաջարկված լուծումները պետք է՝

ա/ Ապահովեն գետի հոսքերի կանոնավոր ընթացքի խոչնդոտների վերացումը,

բ/ հիմնված լինեն ՀՀ-ում գործող տեխնիկական նորմերի, ստանդարտների, միջպետական շինարարական նորմերի վրա /ՀՀՇՆ, СниП, ГОСТ, СТСЭВ, ՀՍՏ, ՇՆՁ, МСП և այլն/:

Ծավալաթերթ-Նախահաշիվ

**ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի Տանձուտ գետի հունի մաքրման աշխատանքներ**

| NN | գնի հիմք | Աշխատանքի նկարագիրը | Չ/մ | Քանակ | Միավ. գինը հազար դրամ | Ընդամենը հազար դրամ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| | | *Ճյուղ 1 ՊԿ 0+00-,-17+60* | - | - | | |
| 1 | 1-1635 1-1646 | ժամանակավոր ճանապարհի /թեքահարթակ/ նախապատրաստում բուլդոզերով բարդ տեղանքի պայմաններում տեղափոխելով մինչև 80մ | 1000 $մ^3$ | 1.890 | 475.327 | 898.37 |
| 2 | 1-1053 | գետի հունի փոքր տրամագծով ծառերի և թփուտների հանում արմատներով | 100 ծառ | 5.57 | 160.155 | 892.06 |
| 3 | 1-1037 1-1055 | գետի հունի մեծ տրամագծով/ Փ32մմ-ից ավելի տրամագծով ծառերի հատում և մասնատում Փ32մմ-ից ավելի տրամագծով / | 100 ծառ | 0.86 | 271.747 | 233.70 |
| 4 | 1-1053 | մեծ տրամագծով ծառերի արմատների հանում | 100 ծառ | 0.86 | 160.155 | 137.73 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 5 | 1-1635 1-1646 գ-1,2 | գետի հունի մաքրում տիղմից և աղբից բուլդոզերով | 1000 մ³ | 10.700 | 570.384 | 6103.11 |
| 6 | 1-1635 1-1646 գ-1,2 | մաքրված տիղմի և աղբի տեղափոխում մինչև 150մ բուլդոզերով | 1000 մ³ | 7.100 | 1021.462 | 7252.38 |
| 7 | 1-1587 գ-2 | մաքրված տիղմի և աղբի բարձում տարայի մեջ հանում գետի հունից ավտոկռունկով բարձելով ինքնաթափին | 1000 մ³ | 3.600 | 1307.909 | 4708.47 |
| 8 | 1-1587 1,2 | մնացած տիղմի և աղբի բարձում 0,8մ3 շերեփի տարողությամբ էքսկավատորով ավտոինքնաթափին | 1000 մ³ | 7.100 | 794.362 | 5639.97 |
| 9 | շուկա | տիղմի և աղբի տեղափոխում մինչև 15կմ համայնքային պահեստարան/10700,0մ3/ | տն | 19260.0 | 1.821 | 35077.74 |
| 10 | 1-1587 1,2 | գետի հունի կառուցման համար հանույթի և լիցքի իրականացում 0,8մ3 շերեփի տարողությամբ էքսկավատորով | 1000 մ³ | 21.500 | 794.362 | 17078.78 |
| 11 | 1-1635 1-1646 | ժամանակավոր ճանապարհի /թեքահարթակ/ ապամոնտաժում բուլդոզերով տեղափոխելով մինչև 80մ | 1000 մ³ | 1.890 | 475.327 | 898.37 |
| | | *ճյուղ 1 ՊԿ 7+60-,-33+60* | - | - | | |
| 1 | 1-1635 1-1646 | ժամանակավոր ճանապարհի /թեքահարթակ/ նախապատրաստում բուլդոզերով բարդ տեղանքի պայմաններում տեղափոխելով մինչև 80մ | 1000 մ³ | 2.320 | 475.327 | 1102.76 |
| 2 | 1-1053 | գետի հունի փոքր տրամագծով ծառերի և թփուտների հանում արմատներով | 100 ծատ | 4.87 | 160.155 | 779.96 |
| 3 | 1-1037 1-1055 | գետի հունի մեծ տրամագծով/ Փ32մմ-ից ավելի տրամագծով ծառերի հատում և մասնատում Փ32մմ-ից ավելի տրամագծով / | 100 ծատ | 0.95 | 271.747 | 258.16 |
| 4 | 1-1053 | մեծ տրամագծով ծառերի արմատների հանում | 100 ծատ | 0.95 | 160.155 | 152.15 |
| 5 | 1-1635 1-1646 գ-1,2 | գետի հունի մաքրում տիղմից և աղբիվ քրքուռավոր տեխնիկայով | 1000 մ³ | 10.940 | 570.384 | 6240.00 |
| 6 | 1-1635 1-1646 գ-1,2 | մաքրված տիղմի և աղբի տեղափոխում մինչև 150մ բուլդոզերով | 1000 մ³ | 9.580 | 1021.462 | 9785.60 |
| 7 | 1-1587 գ-2 | մաքրված տիղմի և աղբի բարձում տարայի մեջ հանում գետի հունից ավտոկռունկով բարձելով ինքնաթափին | 1000 մ³ | 1.360 | 1307.909 | 1778.76 |
| 8 | 1-1587 1,2 | մնացած տիղմի և աղբի բարձում 0,8մ3 շերեփի տարողությամբ էքսկավատորով ավտոինքնաթափին | 1000 մ³ | 10.940 | 794.362 | 8690.32 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 9 | շուկա | տիղմի և աղբի տեղափոխում մինչև 15կմ համայնքային պահեստարան/10700,0մ3/ | տն | 19690.0 | 1.821 | 35860.89 |
| 10 | 1-1587 1,2 | գետի հունի կառուցման համար հանույթի և լիցքի իրականացում 0,8մ3 շերեփի տարողությամբ էքսկավատորով | 1000 $մ^3$ | 27.000 | 794.362 | 21447.77 |
| 11 | 1-1635 1-1646 | ժամանակավոր ճանապարհի /թեքահարթակ/ ապամոնտաժում բուլդոզերով տեղափոխելով մինչև 80մ | 1000 $մ^3$ | 2.320 | 549.460 | 1274.75 |
| | | *ճյուղ 1 ՊԿ 33+60-,-47+20* | - | - | | |
| 1 | 1-1635 1-1646 | ժամանակավոր ճանապարհի /թեքահարթակ/ նախապատրաստում բուլդոզերով բարդ տեղանքի պայմաններում տեղափոխելով մինչև 80մ | 1000 $մ^3$ | 1.740 | 475.327 | 827.07 |
| 2 | 1-1053 | գետի հունի փոքր տրամագծով ծառերի և թփուտների հանում արմատներով | 100 ծառ | 4.85 | 160.155 | 776.75 |
| 3 | 1-1037 1-1055 | գետի հունի մեծ տրամագծով/ Φ32մմ-ից ավելի տրամագծով ծառերի հատում և մասնատում Φ32մմ-ից ավելի տրամագծով / | 100 ծառ | 0.74 | 271.747 | 201.09 |
| 4 | 1-1053 | մեծ տրամագծով ծառերի արմատների հանում | 100 ծառ | 0.74 | 160.155 | 118.51 |
| 5 | 1-1635 1-1646 գ-1,2 | գետի հունի մաքրում տիղմից և աղբից թրթուռավոր տեխնիկայով | 1000 $մ^3$ | 9.900 | 570.384 | 5646.80 |
| 6 | 1-1635 1-1646 գ-1,2 | մաքրված տիղմի և աղբի տեղափոխում մինչև 150մ բուլդոզերով | 1000 $մ^3$ | 7.500 | 1021.462 | 7660.96 |
| 7 | 1-1587 գ-2 | մաքրված տիղմի և աղբի բարձում տարայի մեջ հանում գետի հունից ավտոկռունկով բարձելով ինքնաթափին | 1000 $մ^3$ | 2.400 | 1307.909 | 3138.98 |
| 8 | 1-1587 1,2 | մնացած տիղմի և աղբի բարձում 0,8մ3 շերեփի տարողությամբ էքսկավատորով ավտոինքնաթափին | 1000 $մ^3$ | 9.900 | 794.362 | 7864.18 |
| 9 | շուկա | տիղմի և աղբի տեղափոխում մինչև 15կմ համայնքային պահեստարան/9900,0մ3/ | տն | 17820.0 | 1.821 | 32455.10 |
| 10 | 1-1587 1,2 | գետի հունի կառուցման համար հանույթի և լիցքի իրականացում 0,8մ3 շերեփի տարողությամբ էքսկավատորով | 1000 $մ^3$ | 23.700 | 794.362 | 18826.38 |
| 11 | 1-1635 1-1646 | ժամանակավոր ճանապարհի /թեքահարթակ/ ապամոնտաժում բուլդոզերով տեղափոխելով մինչև 80մ | 1000 $մ^3$ | 1.740 | 549.490 | 956.11 |
| | | *Ընդամենը* | | | | *244763.75* |
| | | *Չնախատեսված ծախսեր 1,5%* | | | | *3671.46* |
| | | *Ընդամենը* | | | | *248435.20* |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | ԱԱՀ 20% | | | | 49687.04 |
| | | Ընդամենը | | | | 298122.24 |

## ՀՀ Լոռու մարզի Արևածագի ջրամբարի դելտայի մոտ Ձորագետ գետի հունի մաքրման աշխատանքներ

| NN | գնի հիմք | Աշխատանքի նկարագիրը | Չ/մ | Քանակ | Միավ. գինը հազար դրամ | Ընդամենը հազար դրամ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| | | *Ճյուղ 1 ՊԿ 0+00-,-4+60* | - | - | | |
| 1 | 1-1053 | գետի հունի փոքր տրամագծով ծառերի և թփուտների հանում արմատներով | 100 ծառ | 1.20 | 160.155 | 192.19 |
| 2 | 1-1053 | մեծ տրամագծով ծառերի արմատների հանում | 100 ծառ | 0.20 | 160.155 | 32.03 |
| 3 | 1-1635 1-1646 գ-1,2 | գետի հունի մաքրում տիղմից և աղբից բուլդոզերով | 1000 $մ^3$ | 12.000 | 578.384 | 6940.61 |
| 4 | 1-1635 1-1646 գ-1,2 | մաքրված տիղմի և աղբի տեղափոխում մինչև 150մ բուլդոզերով | 1000 $մ^3$ | 12.000 | 1025.462 | 12305.54 |
| 5 | 1-1587 գ-2 | մաքրված տիղմի և աղբի բարձում տարայի մեջ հանում գետի հունից ավտոկռունկով բարձելով ինքնաթափին | 1000 $մ^3$ | 11.000 | 1308.909 | 14398.00 |
| 6 | 1-1587 1,2 | մնացած տիղմի և աղբի բարձում 0,8մ3 շերեփի տարողությամբ էքսկավատորով ավտոինքնաթափին | 1000 $մ^3$ | 1.000 | 794.362 | 794.36 |
| 7 | շուկա | տիղմի և աղբի տեղափոխում մինչև 15կմ համայնքային պահեստարան/10700,0մ3/ | տն | 19260.0 | 0.776 | 14939.33 |
| | | *Ընդամենը* | | | | *49602.06* |
| | | *Չնախատեսված ծախսեր 1,5%* | | | | *744.03* |
| | | *Ընդամենը* | | | | *50346.09* |
| | | *ԱԱՀ 20%* | | | | *10069.22* |
| | | *Ընդամենը* | | | | *60415.31* |

## ՀՀ Լոռու մարզի Շնող բնակավայրի տարածքում Դեբեդ գետի հունի մաքրման աշխատանքներ

| NN | | Աշխատանքի նկարագիրը | Չ/մ | Քանակ | | |
|---|---|---|---|---|---|---|

| | գնի հիմք | | | | Միավ. գինը հազար դրամ | Ընդամենը հազար դրամ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| | | *ճյուղ 1 ՊԿ 0+00-,-17+60* | - | - | | |
| 3 | 1-1635<br>1-1646<br>գ-1,2 | գետի հունի մաքրում տիղմից և աղբից բուլդոզերով | 1000 մ³ | 13.000 | 571.384 | 7427.99 |
| 4 | 1-1635<br>1-1646<br>գ-1,2 | մաքրված տիղմի և աղբի տեղափոխում մինչև 150մ բուլդոզերով | 1000 մ³ | 13.000 | 1022.423 | 13291.50 |
| | | *Ընդամենը* | | | | *20719.49* |
| | | *Չնախատեսված ծախսեր 1,5%* | | | | *310.79* |
| | | *Ընդամենը* | | | | *21030.29* |
| | | *ԱԱՀ 20%* | | | | *4206.06* |
| | | *Ընդամենը* | | | | *25236.34* |

**ՀՀ Լոռու մարզի Եղեգնուտ բնակավայրի տարածքում Փամբակ գետի հունի մաքրման աշխատանքներ**

| NN | գնի հիմք | Աշխատանքի նկարագիրը | Չ/մ | Քանակ | Միավ. գինը հազար դրամ | Ընդամենը հազար դրամ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| | | *ճյուղ 1 ՊԿ 0+00-,-17+60* | - | - | | |
| 3 | 1-1635<br>1-1646<br>գ-1,2 | գետի հունի մաքրում տիղմից և աղբից բուլդոզերով | 1000 մ³ | 5.000 | 571.350 | 2856.75 |
| 4 | 1-1635<br>1-1646<br>գ-1,2 | մաքրված տիղմի և աղբի տեղափոխում մինչև 150մ բուլդոզերով | 1000 մ³ | 5.000 | 1022.458 | 5112.29 |
| | | *Ընդամենը* | | | | *7969.04* |
| | | *Չնախատեսված ծախսեր 1,5%* | | | | *119.54* |
| | | *Ընդամենը* | | | | *8088.58* |
| | | *ԱԱՀ 20%* | | | | *1617.72* |
| | | *Ընդամենը* | | | | *9706.29* |

**ՀՀ Լոռու մարզի Դեբեդ գետի երկայնքով երկաթուղու մի քանի հատվածների ափերի ամրացման աշխատանքներ /Ալավերդի, Ախթալա, Հաղպատ և Վանաձոր հատվածներ/**

| Հ/Հ | Հիմնավորումը | Աշխատանքի անվանումը | Չափի միա-վորը | Քանա-կը | 1 միավ. ընդհա-նուր արժեքը հազ. դրամ | Ընդհանուր արժեքը հազ. դրամ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| | | *Ճյուղ 1*<br>***Վանաձորի հատված*** | - | - | | |
| 1 | 1-1635<br>1-1646 | ժամանակավոր ճանապարհի /թեքահարթակ/ նախապատրաստում բուլդոզերով բարդ տեղանքի պայմաններում տեղափոխելով մինչև 80մ | 1000 $մ^3$ | 0.050 | 485.96 | 24.30 |
| 2 | 1-1053 | գետի հունի փոքր տրամագծով ծառերի և թփուտների հանում արմատներով | 100 ծառ | 0.50 | 163.74 | 81.87 |
| 3 | 1-1053 | մեծ տրամագծով ծառերի արմատների հանում | 100 ծառ | 0.50 | 163.74 | 81.87 |
| 4 | 1-1635<br>1-1646 գ-1,2 | գետի հունի մաքրում տիղմից և աղբից բուլդոզերով | 1000 $մ^3$ | 0.950 | 583.14 | 553.98 |
| 5 | 1-1587 1,2 | Պատվարի կառուցման համար լիցքի իրականացում 0,8մ3 շերեփի տարողությամբ էքսկավատորով | 1000 $մ^3$ | 0.300 | 752.13 | 225.64 |
| 6 | շուկա | Ճեղքված բազալտի բերում հանքից, մինչև 15 կմ | տն | 110.0 | 1.86 | 204.82 |
| 7 | շուկա | Ճեղքված բազալտի արժեքը | $մ^3$ | 50.000 | 5.30 | 265.00 |
| | | *Ճյուղ 2*<br>*Ալավերդու հատված* | - | - | | |
| 1 | 1-1635<br>1-1646 | ժամանակավոր ճանապարհի /թեքահարթակ/ նախապատրաստում բուլդոզերով բարդ տեղանքի պայմաններում տեղափոխելով մինչև 80մ | 1000 $մ^3$ | 0.150 | 485.96 | 72.89 |
| 2 | 1-1053 | գետի հունի փոքր տրամագծով ծառերի և թփուտների հանում արմատներով | 100 ծառ | 0.25 | 163.74 | 40.93 |
| 3 | 1-1053 | մեծ տրամագծով ծառերի արմատների հանում | 100 ծառ | 0.25 | 163.74 | 40.93 |
| 4 | 1-1635<br>1-1646 գ-1,2 | գետի հունի մաքրում տիղմից և աղբից բուլդոզերով | 1000 $մ^3$ | 1.100 | 583.14 | 641.45 |
| 5 | 1-1587 1,2 | Պատվարի կառուցման համար լիցքի իրականացում 0,8մ3 շերեփի տարողությամբ էքսկավատորով | 1000 $մ^3$ | 6.800 | 752.13 | 5114.45 |
| 6 | շուկա | Ճեղքված բազալտի բերում հանքից, մինչև 15 կմ | տն | 4070.0 | 1.86 | 7578.34 |
| 7 | շուկա | Ճեղքված բազալտի արժեքը | $մ^3$ | 1850.000 | 5.30 | 9805.00 |
| | | *Ճյուղ 3*<br>*Հաղպատի հատված* | - | - | | |
| 1 | 1-1635<br>1-1646 | ժամանակավոր ճանապարհի /թեքահարթակ/ նախապատրաստում բուլդոզերով բարդ տեղանքի պայմաններում տեղափոխելով մինչև 80մ | 1000 $մ^3$ | 0.150 | 485.96 | 72.89 |
| 2 | 1-1053 | գետի հունի փոքր տրամագծով ծառերի և թփուտների հանում արմատներով | 100 ծառ | 0.30 | 163.74 | 49.12 |
| 3 | 1-1053 | մեծ տրամագծով ծառերի արմատների հանում | 100 ծառ | 0.30 | 163.74 | 49.12 |
| 4 | 1-1635<br>1-1646 գ-1,2 | գետի հունի մաքրում տիղմից և աղբից բուլդոզերով | 1000 $մ^3$ | 1.100 | 583.14 | 641.45 |
| 5 | 1-1587 1,2 | Պատվարի կառուցման համար լիցքի իրականացում 0,8մ3 շերեփի տարողությամբ էքսկավատորով | 1000 $մ^3$ | 1.500 | 812.13 | 1218.19 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 6 | շուկա | Ճեղքված բազալտի բերում հանքից, մինչև 15 կմ | տոն | 110.0 | 1.96 | 215.82 |
| 7 | շուկա | Ճեղքված բազալտի արժեքը | մ³ | 50.000 | 5.30 | 265.00 |
| | | *Ճյուղ 4*<br>*Ախթալայի հատված* | - | - | | |
| 1 | 1-1635<br>1-1646 | ժամանակավոր ճանապարհի /թեքահարթակ/ նախապատրաստում բուլդոզերով բարդ տեղանքի պայմաններում տեղափոխելով մինչև 80մ | 1000 մ³ | 0.150 | 485.96 | 72.89 |
| 2 | 1-1053 | գետի հունի փոքր տրամագծով ծառերի և թփուտների հանում արմատներով | 100 ծառ | 0.25 | 163.74 | 40.93 |
| 3 | 1-1053 | մեծ տրամագծով ծառերի արմատների հանում | 100 ծառ | 0.25 | 163.74 | 40.93 |
| 4 | 1-1635<br>1-1646 գ-1,2 | գետի հունի մաքրում տիղմից և աղբից բուլդոզերով | 1000 մ³ | 4.500 | 583.14 | 2624.13 |
| 5 | 1-1587 1,2 | Պատվարի կառուցման համար լիցքի իրականացում 0,8մ3 շերեփի տարողությամբ էքսկավատորով | 1000 մ³ | 2.500 | 752.13 | 1880.31 |
| 6 | շուկա | Ճեղքված բազալտի բերում հանքից, մինչև 15 կմ | տոն | 693.0 | 1.96 | 1359.67 |
| 7 | շուկա | Ճեղքված բազալտի արժեքը | մ³ | 324.000 | 5.62 | 1821.81 |
| | | *Ճյուղ 5*<br>*Ալավերդի-Չաղպատ միջնամաս* | - | - | | |
| 2 | 1-1053 | գետի հունի փոքր տրամագծով ծառերի և թփուտների հանում արմատներով | 100 ծառ | 0.15 | 163.74 | 24.56 |
| 3 | 1-1053 | մեծ տրամագծով ծառերի արմատների հանում | 100 ծառ | 0.17 | 163.74 | 27.02 |
| 4 | 1-1635<br>1-1646 գ-1,2 | գետի հունի մաքրում տիղմից և աղբից բուլդոզերով | 1000 մ³ | 0.375 | 583.14 | 218.68 |
| 5 | շուկա | Տեղափոխում մինչև 15 կմ | տոն | 324.6 | 1.96 | 636.78 |
| | | ***Ընդամենը՝*** | | | | ***35990.78*** |
| | | ***Չնախատեսված ծախսեր 1,5%*** | | | | ***539.86*** |
| | | ***Ընդամենը*** | | | | ***36530.64*** |
| | | ***ԱԱՀ 20%*** | | | | ***7306.13*** |
| | | ***Ընդամենը*** | | | | ***43836.77*** |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Ջրային կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
scws@scws.am
Հ/Հ 900011056836
ՀՎՀՀ 02555816
Կոմիտեի գլխավոր քարտուղար

Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«Մելիորացիա» ՓԲԸ
ՀՀ Արարատի մարզ, ք. Էջմիածին, գ.Հայանիստ, փ.22
«Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ 1570069947419400
ՀՎՀՀ 04214258
Էլ.հասցե՝ melioracia00@mail.ru
Գլխավոր տնօրեն

Ս. ՄԻՐՈՅԱՆ
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1.1
« 03 » հունիսի 2026թ. կնքված
ՋԿ-ՀՄԱԱՇՁԲ-26/6-Ա ծածկագրով պայմանագրի

## Հիմնական աշխատանքների իրականացման օրացուցային գրաֆիկ

| N ը/կ | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետը | | |
|---|---|---|---|---|
| | | Սկիզբը | Ավարտը համաձայն նախագծի | Տեղամասեր |
| 1 | Մոբիլիզացիա | Հիմք ընդունել ՀՀ կառավարության 21 մայիսի 2026 թվականի N 721 - Ն որոշման 2-րդ կետը: | 3 օր | Շնող բնակավայրի տարածքում Դեբեդ գետի, Տանձուտ, Ձորագետ, Փամբակ գետերի և Դեբեդ գետի երկայնքով երկաթուղու մի քանի հատվածներ |
| 2 | Հողային աշխատանքների իրականացում | | 60 օր | Շնող բնակավայրի տարածքում Դեբեդ գետի, Տանձուտ, Ձորագետ, Փամբակ գետերի և Դեբեդ գետի երկայնքով երկաթուղու մի քանի հատվածներ |
| 3 | Ծառերի, թփերի կտրում | | 60 օր | Շնող բնակավայրի տարածքում Դեբեդ գետի, Տանձուտ, Ձորագետ, Փամբակ գետերի և Դեբեդ գետի երկայնքով երկաթուղու մի քանի հատվածներ |
| 4 | Ափապաշտպան պատի համար ճեղքված բազալտի բերում | | 60 օր | Դեբեդ գետի երկայնքով երկաթուղու մի քանի հատվածներ |
| 5 | Ավելորդ գրունտի տեղափոխում մինչև 15 կմ | | 60 օր | Շնող բնակավայրի տարածքում Դեբեդ գետի, Տանձուտ, Ձորագետ, Փամբակ գետերի և Դեբեդ գետի երկայնքով երկաթուղու մի քանի հատվածներ |
| 6 | Ժամանակավոր հարթակների ապամոնտաժում | | 60 օր | Տանձուտ գետ |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Ջրային կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
scws@scws.am
Հ/Հ 900011056836
ՀՎՀՀ 02555816
Կոմիտեի գլխավոր քարտուղար

________________ Ա. ՄԵԼՔՈՒՄՅԱՆ
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«Մելիորացիա» ՓԲԸ
ՀՀ Արարատի մարզ, ք. Էջմիածին, գ.Հայանիստ, փ.22
«Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ 1570069947419400
ՀՎՀՀ 04214258
էլ. հասցե՝ melioracia00@mail.ru
Գլխավոր տնօրեն

________________ Ս. ՄԻՐՈՅԱՆ
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
« 03 » հունիսի 2026թ. կնքված
ՋԿ-ՀՄԱԱՇՁԲ-26/6-Ա ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում* | | | | | | | |
| | | | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| | 45241131/2 | գետերի հոսանքների կարգավորման և ջրհեղեղների վերահսկման աշխատանքներ | 437,343,960 | 437,343,960 | 437,343,960 | 437,343,960 | 437,343,960 | 437,343,960 | 437,343,960 | **437,343,960** |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Ջրային կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
scws@scws.am
Հ/Հ 900011056836
ՀՎՀՀ 02555816
Կոմիտեի գլխավոր քարտուղար

______________ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ
(ստորագրություն)
Կ. Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«Մելիորացիա» ՓԲԸ
ՀՀ Արարատի մարզ, ք. Էջմիածին, գ.Հայանիստ, փ.22
«Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ 1570069947419400
ՀՎՀՀ 04214258
էլ. հասցե՝ melioracia00@mail.ru
Գլխավոր տնօրեն

______________ Ս. ՄԻՐՈՅԱՆ
(ստորագրություն)
Կ. Տ.

Հավելված 3
« 03 » հունվարի 2026թ. կնքված
ՋԿ-ՀՄԱՇՁԲ-26/6-Ա ծածկագրով պայմանագրի

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ___________________________ | ___________________________ |
| ___________________________ | ___________________________ |
| գտնվելու վայրը ___________ | գտնվելու վայրը ___________ |
| հհ ___________________ | հհ___________________ |
| հվհհ ___________________ | հվհհ___________________ |

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
______________________________________________________________________________
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «__________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

| N | Կատարված աշխատանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Աշխատանքը հանձնեց | Աշխատանքը ընդունեց |
|---|---|
| ___________________________ | ___________________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ___________________________ | ___________________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված 3.1
« 03 » հունվարի 2026թ. կնքված
ՁԿ-ՀՄԱԱՇՁԲ-26/6-Ա ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ___________________-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ______________________ -ին կնքված N ______________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

| Աշխատանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

*Հավելված N 4*
*« 03 » հունիսի 2026թ. կնքված*
*ՋԿ-ՀՄԱԱՇՁԲ-26/6-Ա ծածկագրով պայմանագրի*

# ԾԱՆՈՒՑՈՒՄ

____________________________________________________ հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

1. ____________________________-ի և _______________________-ի միջև «--» 20 թ. կնքված
պատվիրատուի անվանումը կատարողի անվանումը

«---------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և

_____________________-ի միջև «--» 20 թ-ին կնքվել է «---------------------» ծածկագրով ֆակտորինգի
կատարողի անվանումը

պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 7.12 կետով սահմանված պահանջներին:

____________________________________________ ______________
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--» 20 թ.